Երևան	3,408	221	50.8%	6.5%	230	28.6%	6.7%
Արագածոտն	985	18	4.1%	1.8%	50	6.2%	5.1%
Արարատ	1,266	19	4.4%	1.5%	98	12.2%	7.7%
Արմավիր	1,447	32	7.4%	2.2%	85	10.6%	5.9%
Գեղարքունիք	410	7	1.6%	1.7%	25	3.1%	6.1%
Լոռի	671	14	3.2%	2.1%	49	6.1%	7.3%
Կոտայք	2,903	82	18.9%	2.8%	158	19.7%	5.4%
Շիրակ	522	23	5.3%	4.4%	27	3.4%	5.2%
Սյունիք	434	2	0.5%	0.5%	28	3.5%	6.5%
Վայոց Ձոր	245	0	0.0%	0.0%	16	2.0%	6.5%
Տավուշ	504	17	3.9%	3.4%	37	4.6%	7.3%
Հանրապետություն	12,795	435	100.0%	3.4%	803	100.0%	6.3%

Աղյուսակ 3.5-2-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2023 թվականի առաջին և 2022 թվականի երկրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-2

	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
Երևան	329	-32.8%	221	-0.5%	222	334	-31.1%	230	9.5%	210
Արագածոտն	15	20.0%	18	50.0%	12	36	38.9%	50	2.1 անգամ	24
Արարատ	16	18.8%	19	72.7%	11	107	-8.4%	98	36.1%	72
Արմավիր	32	0.0%	32	39.1%	23	96	-11.5%	85	2.4%	83
Գեղարքունիք	10	-30.0%	7	16.7%	6	27	-7.4%	25	-24.2%	33
Լոռի	17	-17.6%	14	27.3%	11	57	-14.0%	49	6.5%	46
Կոտայք	74	10.8%	82	51.9%	54	133	18.8%	158	42.3%	111
Շիրակ	24	-4.2%	23	76.9%	13	61	-55.7%	27	-37.2%	43
Սյունիք	8	-75.0%	2	-66.7%	6	21	33.3%	28	2.2 անգամ	13
Վայոց Ձոր	5	5-ով պակաս	0	2-ով պակաս	2	8	2.0 անգամ	16	3.2 անգամ	5
Տավուշ	9	88.9%	17	-22.7%	22	37	0.0%	37	5.7%	35
Հանրապետություն	539	-19.3%	435	13.9%	382	917	-12.4%	803	19.0%	675

Աղյուսակ 3.5-3-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.5-3

Գույքի տեսակ	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1 Բնակարան	3,331	195	44.8%	5.9%	292	36.4%	8.8%
2 Անհատական բնակելի տուն	2,065	78	17.9%	3.8%	202	25.2%	9.8%
3 Արտադրական նշ. շին	151	3	0.7%	2.0%	3	0.4%	2.0%
4 Հասարակական նշ. շին.	528	21	4.8%	4.0%	20	2.5%	3.8%
5 Ավտոտնակ	672	32	7.4%	4.8%	16	2.0%	2.4%
6 Հող	6,048	106	24.4%	1.8%	270	33.6%	4.5%
6ա Ա/թ գյուղատնտ. նշ. հող	2,983	0	0.0%	0.0%	102	12.7%	3.4%
Ընդամենը	12,795	435	100.0%	3.4%	803	100.0%	6.3%

Աղյուսակ 3.5-4-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2023 թվականի առաջին և 2022 թվականի երկրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-4

		Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք				Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք					
		2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
1	Բնակարան	285	-31.6%	195	1.0%	193	390	-25.1%	292	10.6%	264
2	Անհատական բնակելի տուն	97	-19.6%	78	25.8%	62	220	-8.2%	202	34.7%	150
3	Արտադրական նշ. շին.	4	-25.0%	3	-50.0%	6	2	50.0%	3	-40.0%	5
4	Հասարակական. նշ. շին	21	0.0%	21	0.0%	21	21	-4.8%	20	66.7%	12
5	Ավտոտնակ	42	-23.8%	32	3.2%	31	20	-20.0%	16	-23.8%	21
6	Հող	90	17.8%	106	53.6%	69	264	2.3%	270	21.1%	223
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	0	0.0%	0	0.0%	0	142	-28.2%	102	-13.6%	118
Ընդամենը		539	-19.3%	435	13.9%	382	917	-12.4%	803	19.0%	675

Աղյուսակ 3.5-5-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված, իսկ Աղյուսակ 3.5-6-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի համամասնությունները ըստ պետությունների և տարածաշրջանների:

Աղյուսակ 3.5-5

Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ. նշ.	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	140	58	2	18	21	53	0	292
ԱՄՆ	13	7	0	2	5	18	0	45
Իրան	7	2	0	0	1	7	0	17
Սիրիա	0	0	0	0	0	0	0	0
Եվրոպական պետություններ	19	8	1	1	4	14	0	47
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	7	3	0	0	0	0	0	10
Այլ պետություններ	9	0	0	0	1	14	0	24
ԸՆԴԱՄԵՆԸ	195	78	3	21	32	106	0	435

Աղյուսակ 3.5-6

Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ. նշ.	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	207	151	2	11	11	202	95	584
ԱՄՆ	23	11	0	3	2	13	0	52
Իրան	11	2	1	1	1	10	0	26
Սիրիա	0	0	0	0	0	0	0	0
Եվրոպական պետություններ	28	13	0	3	2	18	2	64
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	17	19	0	1	0	9	3	46
Այլ պետություններ	6	6	0	1	0	18	2	31
ԸՆԴԱՄԵՆԸ	292	202	3	20	16	270	102	803

Աղյուսակ 3.5-7-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2023 թվականի առաջին և 2022 թվականի երկրորդ եռամսյակների նկատմամբ.


Աղյուսակ 3.5-7

Պետության անվանումը	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
Ռուսաստանի Դաշնություն	307	-4.9%	292	1.7%	287	689	-15.2%	584	15.4%	506
ԱՄՆ	68	-33.8%	45	2.6 անգամ	17	74	-29.7%	52	8.3%	48
Իրան	22	-22.7%	17	4.3 անգամ	4	18	44.4%	26	136.4%	11
Սիրիա	2	2-ով պակաս	0	0.0%	0	1	1-ով պակաս	0	0.0%	0
Եվրոպական պետություններ	80	-41.3%	47	-2.1%	48	71	-9.9%	64	48.8%	43
ԱՊՀ պետություններ, քաղաքացիներ ՌԴ	26	-61.5%	10	-16.7%	12	42	9.5%	46	2.2%	45
Այլ պետություններ	34	-29.4%	24	71.4%	14	22	40.9%	31	40.9%	22
ԸՆԴԱՄԵՆԸ	539	-19.3%	435	13.9%	382	917	-12.4%	803	19.0%	675

3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2023 թվականի երկրորդ եռամսյակում իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 3,331 գործարք: 2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 9.3 %-ով, 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 32.5 %-ով:

Գծապատկեր 3.6-1-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.



Աղյուսակ 3.6-1-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի առաջին և 2022 թվականի երկրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.6-1


	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
Երևան	3,343	-39.8%	2,013	9.0%	1,847
Արագածոտն	33	21.2%	40	81.8%	22
Արարատ	107	-6.5%	100	-21.3%	127
Արմավիր	182	-15.9%	153	13.3%	135
Գեղարքունիք	54	31.5%	71	24.6%	57
Լոռի	246	-13.0%	214	16.3%	184
Կոտայք	521	-31.5%	357	0.0%	357
Շիրակ	223	-29.1%	158	4.6%	151
Սյունիք	128	11.7%	143	43.0%	100
Վայոց ձոր	25	56.0%	39	85.7%	21
Տավուշ	73	-41.1%	43	-6.5%	46
Հանրապետություն	4,935	-32.5%	3,331	9.3%	3,047

3.6.2 Երևան քաղաքում 2023 թվականի երկրորդ եռամսյակում իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 2,013 գործարք, 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 9.0 %-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 39.8 %-ով:

Երևան քաղաքում 2023 թվականի երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափ՝ 16.1 %, արձանագրվել է Արաբկիր իսկ առավել ցածրը՝ 0.4 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.6-2-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.6-2



Աղյուսակ 3.6-2-ում ներկայացված են 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների:

Աղյուսակ 3.6-2

Վարչական շրջան	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
Կենտրոն միջին	737,900	10.8%	817,300	2.7%	796,200
Կենտրոն (Գոտի 1)	942,500	11.6%	1,051,700	4.6%	1,005,700
Կենտրոն (Գոտի 2)	783,600	10.1%	862,900	2.6%	841,050
Կենտրոն (Գոտի 3)	659,800	12.5%	742,400	3.9%	714,500
Կենտրոն (Գոտի 4)	554,900	5.9%	587,500	2.1%	575,400
Կենտրոն (Գոտի 5)	456,700	10.3%	503,850	5.4%	477,900
Արաբկիր միջին	522,000	9.8%	573,300	3.1%	556,200
Արաբկիր (Գոտի 3)	574,800	3.7%	596,100	2.4%	582,000
Արաբկիր (Գոտի 4)	521,800	5.7%	551,300	2.4%	538,400
Արաբկիր (Գոտի 5)	490,900	20.7%	592,400	10.3%	537,300

Արարկիր (Գոտի 7)	396,200	12.5%	445,900	2.9%	433,350
Քանաքեռ-Զեյթուն միջին	383,700	4.4%	400,500	2.0%	392,700
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 4)	424,400	2.1%	433,500	0.6%	431,100
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 5)	390,800	3.3%	403,600	1.9%	395,900
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 6)	370,000	6.0%	392,200	1.7%	385,600
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 7)	321,300	5.0%	337,300	1.1%	333,600
Նոր-Նորք միջին	326,900	7.1%	350,100	4.1%	336,400
Նոր-Նորք (Գոտի 5)	372,000	4.7%	389,400	3.2%	377,300
Նոր-Նորք (Գոտի 6)	334,600	5.0%	351,400	2.2%	343,700
Նոր-Նորք (Գոտի 7)	300,600	4.2%	313,300	3.4%	303,000
Նոր-Նորք (Գոտի 8)	279,900	9.3%	306,000	4.0%	294,200
Էրեբունի միջին	335,600	8.3%	363,300	4.2%	348,500
Էրեբունի (Գոտի 5)	390,300	2.5%	400,000	2.0%	392,100
Էրեբունի (Գոտի 6)	354,700	5.8%	375,400	3.6%	362,300
Էրեբունի (Գոտի 7)	349,200	5.6%	368,800	3.2%	357,400
Էրեբունի (Գոտի 8)	301,700	6.3%	320,600	3.1%	310,900
Էրեբունի (Գոտի 9)	260,100	13.6%	295,400	5.3%	280,600
Շենգավիթ միջին	339,400	5.5%	358,200	2.3%	350,200
Շենգավիթ (Գոտի 5)	379,100	1.6%	385,100	1.2%	380,700
Շենգավիթ (Գոտի 6)	351,900	5.3%	370,400	1.1%	366,300
Շենգավիթ (Գոտի 7)	327,500	5.7%	346,300	2.2%	338,700
Շենգավիթ (Գոտի 8)	323,500	3.0%	333,100	2.6%	324,700
Շենգավիթ (Գոտի 9)	286,300	0.1%	286,600	0.7%	284,500
Դավթաշեն միջին	380,200	10.1%	418,500	3.1%	406,100
Դավթաշեն (Գոտի 5)	384,100	10.6%	424,800	3.3%	411,400
Դավթաշեն (Գոտի 7)	373,200	11.1%	414,600	3.3%	401,300
Աջափնյակ միջին	357,600	4.3%	373,000	2.3%	364,500
Աջափնյակ (Գոտի 5)	368,700	10.0%	405,400	3.5%	391,700
Աջափնյակ (Գոտի 6)	368,800	1.8%	375,600	1.6%	369,700
Աջափնյակ (Գոտի 7)	345,400	-0.9%	342,400	1.8%	336,500
Աջափնյակ (Գոտի 8)	281,500	-1.2%	278,000	0.4%	277,000
Մալաթիա-Սեբաստիա միջին	332,000	9.5%	363,400	3.2%	352,000
Մալաթիա-Սեբաստիա (Գոտի 5)	510,000	5.6%	538,500	2.3%	526,300
Մալաթիա-Սեբաստիա (Գոտի 6)	342,000	2.3%	349,900	1.8%	343,700
Մալաթիա-Սեբաստիա (Գոտի 7)	355,200	10.6%	392,700	1.7%	386,000
Մալաթիա-Սեբաստիա (Գոտի 9)	288,400	11.7%	322,000	3.6%	310,800
Ավան միջին	330,600	8.4%	358,400	2.8%	348,600
Ավան (Գոտի 5)	361,800	11.3%	402,800	4.2%	386,700
Ավան (Գոտի 6)	349,500	10.0%	384,400	3.0%	373,200
Ավան (Գոտի 7)	331,200	1.7%	336,700	1.5%	331,700
Ավան (Գոտի 8)	258,350	11.1%	287,100	2.4%	280,350
Նուբարաշեն միջին	202,400	3.8%	210,100	2.0%	206,050
Նուբարաշեն (Գոտի 10)	212,500	5.5%	224,200	2.7%	218,350
Նուբարաշեն (Գոտի 11)	194,400	4.8%	203,700	1.2%	201,200

Գնային փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել է 2.9%-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 8.0%-ով:

Ծանոթություն

Քաղաքացիական իրավունքի շեղումների բնակարանների շուկայական միջին գները տրված են ըստ ՀՀ կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշմամբ հաստատված տարածազնահատման գոտիների:


*N/A-նշված գոտում միջին գնի հաշվարկման համար 1 տարվա ընթացքում բավարար քանակով գործարքներ չեն գրանցվել

3.6.3 2023 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 1,318 բնակարան, ընդ որում՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների 8.2 %-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2023 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 9.8 %-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 17.2 %-ով:

Գծապատկեր 3.6-3-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.6-3



Աղյուսակ 3.6-3-ում ներկայացված են 2023 թվականի երկրորդ եռամսյակում մարզերի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների, վաճառահանված բնակարանների առաջարկվող գների և մասնագիտացված կազմակերպության կողմից անշարժ գույքի գների վերաբերյալ տրամադրված տվյալների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1մ² մակերեսի հաշվարկով.

Աղյուսակ 3.6-3

Մարզ	Քաղաք	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխում	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխում	2023 թվականի առաջին եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	165,200	8.5%	179,200	1.6%	176,300
	Ապարան	92,300	10.7%	102,200	3.4%	98,800
	Թալին	79,500	2.8%	81,750	3.4%	79,100
Արարատ	Արտաշատ	163,700	9.2%	178,800	4.5%	171,100
	Մասիս	160,600	14.7%	184,200	3.8%	177,500
	Վեդի	134,700	6.2%	143,100	2.2%	140,000
	Արարատ	121,800	14.9%	139,900	5.7%	132,400
Արմավիր	Վաղարշապատ	215,000	9.6%	235,600	3.4%	227,900
	Արմավիր	133,300	16.7%	155,600	4.6%	148,700
	Մեծամոր	102,500	20.2%	123,200	5.9%	116,300
Գեղարքունիք	Սևան	106,400	13.3%	120,600	5.1%	114,800
	Գավառ	69,900	22.2%	85,400	8.5%	78,700
	Մարտունի	109,700	8.2%	118,700	2.0%	116,400
	Վարդենիս	53,100	11.1%	59,000	0.3%	58,800
	Ճամբարակ	40,400	10.6%	44,700	3.5%	43,200
Լոռի	Վանաձոր	115,900	11.1%	128,800	4.4%	123,400
	Ստեփանավան	65,700	16.4%	76,500	2.8%	74,400
	Սյիտակ	119,000	7.4%	127,800	2.7%	124,400
	Ալավերդի	54,900	15.8%	63,600	4.7%	60,750
	Տաշիր	59,400	4.9%	62,300	1.1%	61,600
	Թումանյան	23,500	6.4%	25,000	0.0%	25,000
	Ախթալա	43,700	5.3%	46,000	3.4%	44,500
Կոտայք	Արուսեան	249,400	2.8%	256,400	1.5%	252,500
	Նոր Հաճն	154,500	13.5%	175,350	4.7%	167,400
	Բյուրեղավան	142,700	16.3%	165,900	5.3%	157,500
	Եղվարդ	159,750	16.6%	186,200	5.0%	177,400
	Հրազդան	92,700	25.2%	116,100	6.1%	109,400
	Ծաղկաձոր	365,200	11.0%	405,400	2.0%	397,500
	Չարենցավան	109,850	17.8%	129,400	5.3%	122,900
Շիրակ	Գյումրի	139,400	11.0%	154,700	3.9%	148,900
	Արթիկ	78,800	3.0%	81,200	-2.6%	83,400
	Մարալիկ	57,700	12.1%	64,700	2.1%	63,400
Սյունիք	Գորիս	154,000	12.1%	172,600	4.4%	165,350
	Կապան	131,800	19.2%	157,100	6.6%	147,400
	Միսիան	92,900	13.2%	105,200	4.2%	101,000
	Մեղրի	110,100	7.6%	118,500	1.7%	116,500
	Քաջարան	112,000	8.5%	121,500	4.2%	116,600
Վայոց ձոր	Վայք	96,050	16.6%	112,000	5.5%	106,200
	Եղեգնաձոր	129,500	10.0%	142,500	4.6%	136,200
	Ջերմուկ	113,300	3.9%	117,700	1.2%	116,300
Տավուշ	Դիլիջան	156,500	12.6%	176,200	4.4%	168,800
	Իջևան	144,700	9.9%	159,000	2.5%	155,100
	Բերդ	101,300	3.7%	105,050	0.3%	104,700
	Նոյեմբերյան	85,200	9.2%	93,000	1.8%	91,400
	Այրում	59,000	6.4%	62,800	0.8%	62,300

Գնային փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2023 թվականի երկրորդ եռամսյակում մարզերի քաղաքներում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2023


թվականի առաջին եռամսյակի համեմատ՝ աճել է 3.5%-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 11.3%-ով:

3.7 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.7.1 Հանրապետությունում 2023 թվականի երկրորդ եռամսյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 6,048 գործարք: 2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցված հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 20.0 %-ով, 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 5.1%-ով:

Գծապատկեր 3.7-1-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի:

Գծապատկեր 3.7-1



Աղյուսակ 3.7-1-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի առաջին և 2022 թվականի երկրորդ եռամսյակների նկատմամբ:


Աղյուսակ 3.7-1

	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
Երևան	394	-21.6%	309	18.4%	261
Արագածոտն	791	0.9%	798	21.6%	656
Արարատ	936	-12.4%	820	19.0%	689
Արմավիր	1,019	-4.9%	969	15.4%	840
Գեղարքունիք	261	-32.2%	177	18.8%	149
Լոռի	272	-6.3%	255	30.1%	196
Կոտայք	1,898	0.5%	1,907	34.2%	1,421
Շիրակ	187	-2.7%	182	20.5%	151
Սյունիք	98	66.3%	163	-48.7%	318
Վայոց ձոր	173	-6.4%	162	37.3%	118
Տավուշ	347	-11.8%	306	27.0%	241
Հանրապետություն	6,376	-5.1%	6,048	20.0%	5,040

3.7.2 Երևան քաղաքում 2023 թվականի երկրորդ եռամսյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 309 գործարք: 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 18.4 %-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 21.6 %-ով:

Գծապատկեր 3.7-2-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում հողի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.7-2



2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 23.0 %, արձանագրվել է Մալաթիա-Սեբաստիա, իսկ առավել ցածրը՝ 1.3 %՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում:

2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացվել է հողերի առուվաճառքի 309 գործարք՝ 22.19 հա ընդհանուր մակերեսով, որոնք, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 55 միավոր (4.21 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 181 միավոր (9.48 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 67 միավոր (7.14 հա),
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հող՝ 6 միավոր (1.36 հա):

Երևան քաղաքում վաճառված հողերի քանակի 3.2 %-ը կամ 10 միավոր (0.72 հա) ընդհանուր մակերեսով հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 96.8 %-ը կամ 299 միավոր (21.47 հա)՝ մասնավոր սեփականության հող: 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևանում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք (0.001 հա):

Աղյուսակ 3.7-2-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

Աղյուսակ 3.7-2

Վարչական շրջան	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողեր								Մասնավոր սեփականություն հանդիսացող հողեր							
	գյուղ. նշանակության		արդյունաբերական		բնակավայրերի				գյուղ. նշանակության		արդյունաբերական		բնակավայրերի			
					բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման						բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման	
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.07	17	0.73	9	0.86
Էրեբունի	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.10	3	0.10	2	0.20
Աջափնյակ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	39	1.93	13	0.74
Ավան	0	0.00	1	0.02	0	0.00	1	0.01	0	0.00	1	0.02	9	0.53	13	1.59
Արարկիր	0	0.00	0	0.00	2	0.09	0	0.00	0	0.00	0	0.00	14	0.72	2	0.34
Կենտրոն	0	0.00	0	0.00	4	0.12	0	0.00	0	0.00	0	0.00	7	0.13	3	0.01
Մալաթիա-Սեբաստիա	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	43	2.06	0	0.00	23	0.87	5	0.48
Քանաքեռ-Զեյթուն	0	0.00	0	0.00	1	0.08	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.32	0	0.00
Շենգավիթ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	12	2.15	2	1.15	15	0.64	2	0.08
Նոր Նորք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	19	1.17	8	0.92
Նորք-Մարաշ	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.40	0	0.00	0	0.00	8	1.29	8	1.51
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	17	0.76	0	0.00
Ընդամենը	0	0.00	1	0.02	7	0.29	2	0.41	55	4.21	5	1.34	174	9.19	65	6.73


2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում հողերի աճուրդային վաճառքի գործարք չի գրանցվել:

3.7.3 Մարզերում 2023 թվականի երկրորդ եռամսյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 5,739 գործարք, ընդ որում՝ նշված առուվաճառքի գործարքների 79.3 %-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում: 2023 թվականի երկրորդ եռամսյակում

մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 20.1 %-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 4.1 %-ով:

Գծապատկեր 3.7-3-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը:

Գծապատկեր 3.7-3



Մարզերում 2023 թվականի երկրորդ եռամսյակում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 33.2 %, գրանցվել է Կոտայքի, իսկ առավել ցածրը՝ 2.8 % Վայոց Ձորի մարզերում:

2023 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում իրականացվել է հողերի առուվաճառքի 5,739 գործարք՝ 4567.09 հա ընդհանուր մակերեսով, որոնք, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 2,928 միավոր (4263.53 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 2,347 միավոր (198.32 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 333 միավոր (38.33 հա),
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հող՝ 93 միավոր (31.70 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 27 միավոր (14.89 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 11 միավոր (20.32 հա):

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2718.35 հա, որից 2674.79 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Մարզերում վաճառված հողերի քանակի 17.1 %-ը կամ 983 միավորը (346.59 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 82.9 %-ը կամ 4,756 միավորը (4220.50 հա)՝ մասնավոր սեփականության հող: 2023 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 55 գործարք (22.61 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի:

Աղյուսակ 3.7-4-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի՝ բացառությամբ առողջարարական նպատակով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի:

Աղյուսակ 3.7-4

Վարչական շրջան	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողեր								Մասնավոր սեփականություն հանդիսացող հողեր							
	գյուղ. նշա նակության		արդյունաբերական		բնակավայրերի				գյուղ. նշա նակության		արդյունաբերական		բնակավայրերի			
					բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման						բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման	
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)
Արագածոտն	83	72.06	10	1.42	50	3.33	14	2.54	370	350.12	0	0.00	244	24.95	22	5.59
Արարատ	21	16.26	5	0.44	41	2.17	23	0.53	400	183.22	3	3.25	310	23.82	17	0.99
Արմավիր	58	68.83	4	0.43	14	0.27	27	1.37	485	2605.96	6	4.08	357	32.39	17	3.19
Գեղարքունիք	5	17.07	2	0.25	17	0.76	20	0.97	73	82.05	2	0.54	51	6.52	4	0.12
Լոռի	15	9.63	7	0.76	11	0.84	10	1.00	126	117.68	1	0.18	75	7.29	8	0.73
Կոտայք	58	79.19	13	7.49	139	5.74	30	1.25	867	427.01	14	6.16	725	63.62	40	5.46
Շիրակ	8	0.12	7	2.43	42	2.20	21	0.80	61	71.38	0	0.00	34	3.48	9	0.54
Սյունիք	4	1.81	4	0.25	13	0.87	11	0.23	77	59.15	5	2.26	47	3.33	2	0.13
Վայոց ձոր	47	14.31	5	0.29	16	0.54	12	0.28	55	26.55	0	0.00	17	1.55	8	0.22
Տավուշ	21	12.85	5	1.47	44	3.03	25	0.93	94	48.28	0	0.00	100	11.62	13	11.46
Ընդամենը	320	292.13	62	15.23	387	19.75	193	9.90	2608	3971.4	31	16.47	1960	178.57	140	28.43

Աղյուսակ 3.7-5-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային և ուղղակի վաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և ըստ հողերի նպատակային նշանակության՝ բացառությամբ առողջարարական նպատակով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի:

Վարչական շրջան	Հողերի ուղղակի վաճառք								Հողերի աճուրդ վաճառք									
	արդյունաբերական		բնակավայրերի հողեր				ընդամենը		գյուղ. նշանակության		արդյունաբերական		բնակավայրերի հողեր				ընդամենը	
			բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման								բնակելի կառուցապատման		հասարակական կառուցապատման			
	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)	միավոր	մակերես (հա)
Արագածոտն	0	0.00	3	0.10	6	1.55	9	1.65	53	48.01	10	1.42	47	3.23	8	0.99	118	53.65
Արարատ	1	0.04	5	0.11	4	0.07	10	0.22	15	10.23	4	0.40	36	2.06	19	0.46	74	13.15
Արմավիր	0	0.00	9	0.13	5	0.31	14	0.44	48	63.95	4	0.43	5	0.14	22	1.06	79	65.58
Գեղարքունիք	0	0.00	8	0.38	4	0.11	12	0.49	5	17.07	2	0.25	9	0.38	16	0.86	32	18.56
Լոռի	0	0.00	6	0.23	3	0.05	9	0.28	11	5.04	7	0.76	5	0.61	7	0.95	30	7.36
Կոտայք	1	0.01	33	1.39	8	0.44	42	1.84	48	76.59	12	7.48	106	4.35	22	0.81	188	89.23
Շիրակ	1	0.05	6	0.01	8	0.18	15	0.24	0	0.00	6	2.38	36	2.19	13	0.62	55	5.19
Սյունիք	2	0.20	6	0.13	11	0.23	19	0.56	3	1.80	2	0.05	7	0.74	0	0.00	12	2.59
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	1	0.002	1	0.002	33	14.10	5	0.29	16	0.54	11	0.28	65	15.21
Տավուշ	0	0.00	11	0.32	2	0.02	13	0.34	20	12.80	5	1.47	33	2.71	23	0.91	81	17.89
Ընդամենը	5	0.30	87	2.8	52	2.962	144	6.062	236	249.59	57	14.93	300	16.95	141	6.94	734	288.41

2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 84 գործարք՝ 42.54 հա ընդհանուր մակերեսով:

2023 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում գրանցվել է հողերի աճուրդային վաճառքի 751 գործարք, ընդ որում՝ աճուրդային վաճառքի գործարքների քանակը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 53.3 %-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 85.9 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի աճուրդային վաճառքի գործարքների քանակը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 14.6 %-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 18.6 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 49.3 %-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 2.7 անգամ, հասարակական կառուցապատման հողերը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 2.3 անգամ, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 2.1 անգամ, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 4.4 անգամ, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 2.7 անգամ:

Աղյուսակ 3.7-6-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում Հանրապետության առավել ակտիվ քաղաքներում՝ բացառությամբ Երևան քաղաքի, վաճառված բնակավայրերի հողերի պայմանագրային միջին գների վերլուծության արդյունքները 1մ² մակերեսի հաշվարկով.

Մարզ	Քաղաք	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	11,000	-5.5%	10,400	0.0%	10,400
	Ապարան	3,200	0.0%	3,200	0.0%	3,200
Արարատ	Արտաշատ	10,300	10.7%	11,400	0.9%	11,300
	Մասիս	9,300	8.6%	10,100	1.0%	10,000
	Վեդի	3,500	2.9%	3,600	2.9%	3,500
Արմավիր	Վաղարշապատ	12,400	-2.4%	12,100	-2.4%	12,400
	Արմավիր	9,400	-1.1%	9,300	-2.1%	9,500
Գեղարքունիք	Սևան	4,900	8.2%	5,300	1.9%	5,200
	Մարտունի	2,050	9.8%	2,250	2.3%	2,200
	Վարդենիս	1,350	14.8%	1,550	3.3%	1,500
Լոռի	Վանաձոր	10,800	7.4%	11,600	0.9%	11,500
	Ստեփանավան	3,700	8.1%	4,000	2.6%	3,900
	Ալավերդի	3,100	0.0%	3,100	-3.1%	3,200
Կոտայք	Արուսյան	11,500	14.8%	13,200	3.1%	12,800
	Հրազդան	5,100	7.8%	5,500	1.9%	5,400
Շիրակ	Գյումրի	9,800	10.2%	10,800	2.9%	10,500
Սյունիք	Գորիս	5,100	-7.8%	4,700	-2.1%	4,800
	Կապան	3,000	6.7%	3,200	0.0%	3,200
	Մեղրի	1,800	0.0%	1,800	0.0%	1,800
Վայոց ձոր	Եղեգնաձոր	5,000	8.0%	5,400	1.9%	5,300
	Ջերմուկ	6,000	8.3%	6,500	1.6%	6,400
Տավուշ	Դիլիջան	9,200	14.1%	10,500	2.9%	10,200
	Իջևան	4,300	4.7%	4,500	2.3%	4,400
	Նոյեմբերյան	2,500	0.0%	2,500	0.0%	2,500


4 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

4.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն

4.1.1 2023 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 3,104 վարձակալության գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների ընդհանուր քանակի 5.7 %-ը:


2010-2023 թվականների երկրորդ եռամսյակ ամսվա անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 4.1-1-ում.

Գծապատկեր 4.1-1




4.1.2 Հանրապետությունում 2023 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 55.7 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 2.6 %՝ Վայոց Ձորի մարզում:

Գծապատկեր 4.1-2-ում և Գծապատկեր 4.1-3-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի վարձակալության գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.



Գծապատկեր 4.1-3



Աղյուսակ 4.1-1-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված վարձակալության գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի առաջին և 2022 թվականի երկրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 4.1-1

	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
Երևան	1,658	4.2%	1,728	1.7%	1,699
Արագածոտն	123	4.9%	129	98.5%	65
Արարատ	98	63.3%	160	28.0%	125
Արմավիր	125	-5.6%	118	29.7%	91
Գեղարքունիք	112	2.1 անգամ	231	-24.8%	307
Լոռի	157	-26.8%	115	21.1%	95
Կոտայք	220	-5.0%	209	14.8%	182
Շիրակ	103	3.9%	107	7.0%	100
Սյունիք	118	-24.6%	89	-19.1%	110
Վայոց ձոր	54	50.0%	81	-58.2%	194
Տավուշ	116	18.1%	137	24.5%	110
Հանրապետություն	2,884	7.6%	3,104	0.8%	3,078


2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցված վարձակալության գործարքների քանակը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 0.8 %-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 7.6 %-ով:

4.1.3 Հանրապետությունում 2023 թվականի երկրորդ եռամսյակում վարձակալության գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 51.3 %, գրանցվել է հասարակական նշանակության շինությունների, առավել ցածրը՝ 1.4 %՝ ավտոտնակների նկատմամբ:


Հողերի նկատմամբ իրականացվել է 841 միավոր վարձակալության գործարք՝ 1773.95 ընդհանուր մակերեսով, որից 42 միավորը՝ 8.73 հա մակերեսով, սերվիտուտի իրավունքի գրանցում, ընդ որում՝ առավել մեծ՝ 416.28 հա ընդհանուր մակերեսով հողամասեր վարձակալվել են Արարատի մարզում:

Գծապատկեր 4.1-4-ում և Գծապատկեր 4.1-5-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված վարձակալության գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Հանրապետությունում վարձակալության գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Հանրապետությունում վարձակալության գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Աղյուսակ 4.1-2-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացված վարձակալության գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի առաջին և 2022 թվականի երկրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 4.1-2

Հ/Հ	Գույքի տեսակ	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
1	Բնակարան	545	-44.4%	303	-21.5%	386
2	Անհատական բնակելի տուն	139	-37.4%	87	-32.0%	128
3	Արտադրական նշ. շին	209	14.4%	239	-0.8%	241
4	Հասարակական նշ. շին.	1,257	26.6%	1,591	5.5%	1,508
5	Ավտոտնակ	14	3.1 անգամ	43	4.3 անգամ	10
6	Հող	720	16.8%	841	4.5%	805
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	320	52.2%	487	-6.9%	523
Ընդամենը		2,884	7.6%	3,104	0.8%	3,078

Աղյուսակ 4.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2023 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված վարձակալության գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Աղյուսակ 4.1-3


Գույքի տեսակ	Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր			
	քանակ	%	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	
1	Բնակարան	303	9.8%	156	9.0%	51.5%	144	20.6%	47.5%	3	0.4%	1.0%
2	Անհատական բնակելի տուն	87	2.8%	39	2.3%	44.8%	41	5.9%	47.1%	7	1.0%	8.0%
3	Արտադրական նշ. շին	239	7.7%	136	7.9%	56.9%	32	4.6%	13.4%	71	10.5%	29.7%
4	Հասարակական նշ. շին.	1,591	51.3%	1,244	72.0%	78.2%	204	29.2%	12.8%	143	21.1%	9.0%
5	Ավտոտնակ	43	1.4%	39	2.3%	90.7%	4	0.6%	9.3%	0	0.0%	0.0%
6	Հող	841	27.1%	114	6.6%	13.6%	274	39.2%	32.6%	453	66.9%	53.9%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	487	15.7%	3	0.2%	0.6%	164	23.5%	33.7%	320	47.3%	65.7%
Ընդամենը /գործարք/		3,104	100.0%	1,728	100.0%	55.7%	699	100.0%	22.5%	677	100.0%	21.8%

4.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն

4.2.1 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում գրանցվել է 1,728 վարձակալության գործարք, որը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 1.7 %-ով, իսկ 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 4.2 %-ով: Երևան քաղաքում անշարժ գույքի վարձակալության գործարքներից առավել բարձր տոկոսաչափ՝ 38.9 %, գրանցվել է Կենտրոն, իսկ առավել ցածրը՝ 0.3 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 4.2-1-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված վարձակալության գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 4.2-1



Աղյուսակ 4.2-1-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված վարձակալության գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի առաջին և 2022 թվականի երկրորդ եռամսյակների նկատմամբ:


Աղյուսակ 4.2-1

Վարչական շրջան	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
Դավթաշեն	31	48.4%	46	39.4%	33
Էրեբունի	94	17.0%	110	14.6%	96
Աջափնյակ	110	-14.5%	94	-6.0%	100
Ավան	50	16.0%	58	28.9%	45
Արարկիր	213	22.1%	260	0.4%	259
Կենտրոն	561	20.0%	673	10.7%	608
Մալաթիա-Սեբաստիա	127	-16.5%	106	-21.5%	135
Քանաքեռ-Զեյթուն	109	-33.9%	72	-20.0%	90
Շենգավիթ	174	-8.0%	160	-10.1%	178
Նոր Նորք	140	-20.0%	112	-13.8%	130
Նորք-Մարաշ	37	-16.2%	31	72.2%	18
Նուբարաշեն	12	-50.0%	6	-14.3%	7
Երևան	1,658	4.2%	1,728	1.7%	1,699

4.2.2 Երևան քաղաքում 2023 թվականի երկրորդ եռամսյակում վարձակալության գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 72.0 %, գրանցվել է հասարակական նշանակության շինությունների, առավել ցածր՝ 2.3-ական %, անհատական բնակելի տների և ավտոտնակների նկատմամբ: Երևան քաղաքում իրականացվել է հողերի վարձակալության 114 գործարք՝ 1.42 հա մակերեսով, որից 4 միավորը՝ 0.13 հա մակերեսով, սերվիտուտի իրավունքի գրանցում:

Գծապատկեր 4.2-2-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 4.2-2



Աղյուսակ 4.2-2-ում ներկայացված է 2023 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված վարձակալության գործարքների քանակական համեմատությունը 2023 թվականի առաջին և 2022 թվականի երկրորդ եռամսյակների նկատմամբ.

Աղյուսակ 4.2-2

Հ/Հ	Գույքի տեսակ	2022 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի երկրորդ եռամսյակ	փոփոխումը	2023 թվականի առաջին եռամսյակ
1	Բնակարան	307	-49.2%	156	-21.2%	198
2	Անհատական բնակելի տուն	56	-30.4%	39	-31.6%	57
3	Արտադրական նշ. շին	123	10.6%	136	-8.7%	149
4	Հասարակական նշ. շին.	927	34.2%	1,244	7.9%	1,153
5	Ավտոտնակ	10	3.9 անգամ	39	6.5 անգամ	6
6	Հող	235	-51.5%	114	-16.2%	136
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	2	50.0%	3	3.0 անգամ	1
Ընդամենը		1,658	4.2%	1,728	1.7%	1,699

4.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն


2023 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում գրանցվել է 1,376 վարձակալության գործարք, որը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ նվազել է 0.2 %-ով, 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ աճել 12.2 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում գրանցված վարձակալության գործարքների քանակը 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ նվազել է 10.7 %-ով, 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 5.5 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 13.6 %-ով, 2022 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 39.3 %-ով:

2023 թվականի երկրորդ եռամսյակում վարձակալության գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 52.8 %, գրանցվել է հողերի, առավել ցածրը՝ 0.3 %՝ ավտոտնակների նկատմամբ: Մարզերում իրականացվել է հողերի վարձակալության 727 գործարք՝ 1772.53 հա ընդհանուր մակերեսով, որից 38 միավորը՝ 8.60 հա մակերեսով, սերվիտուտի իրավունքի գրանցում, որոնք, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 484 միավոր (1471.56 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 47 միավոր (1.94 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 75 միավոր (8.73 հա),
